

- 6 Անդ կայր յայնժամ արքունեաց տուն ,
Մեծամեծաց եւ Տեարց Համբուն ,
Իբր առ մարտի Գ^օրան Օսմանցւոյն
Ընդդէմ կայսեր Գերմանացւոյն :
- 7 Ուր եւ ապա հասեալ ժամուն՝
Նա ծնանէր զիւր փաղփաչուն ,
կայտառ , զուարթ փունջ ոսկեգոյն
Մատաղ մանուկ ազնուագոյն :
- 8 Այս ինչ լինէր ի մէջ ամայն
Փետրուարի այնր տարւոյն ,
Որ վերջինն էր անցեալ դարուն
Յառաջաւոր կոչեալ պատուն :
- 9 Չոր մկրտեն յօր շաբաթուն ,
Յոր Սուրբ Սարգիս Չօրագլխոյն
Տօն , յիշատակ եւ ցնծութիւն
կատարէ միշտ Հայոց Սուրբ տուն :
- 10 Որ եւ դրօշմեալ միահաղոյն
Ըստ մեր ծիսի յոյժ հնագոյն
Ի 'արեւելեան Եկեղեցւոյն՝
Առնոյր անդրէն Սարգիս անուն :
- 11 Ապա անտի դառնան իսկոյն
Ի Բիւզանդե^օայ իւրեանց իսկ տուն ,
Ուր զարգացեալ հասակ նորուն
Աճէր ծ^օնողացն ուրախութիւն :
- 12 Եւ պատճառ սնանելոյն
Ի նոյն քաղաք մեծ եւ զարդուն ,
Առնոյր Սարգիս մեր զուարթուն
Բիւզանդացի միւս մականուն :